ПРИМЕНЕНИЕ ВИДОВ РЕЦЕПТИВНОЙ РЕЧЕВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ПОЛИТИЧЕСКОМУ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ

Марине Агвановна Пилипосян
marinepiliposyan@gmail.com

Аспирант, лаборант кафедры педагогики и методики преподавания языков,
Государственный университет им. В.Я. Брюсова,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье рассматривается проблема использования видов рецептивной деятельности чтения и аудирования в процессе обучения политическому английскому языку. Представлены актуальные задания, которые максимально помогают обучающимся освоить профессиональный язык, в данном случае политический английский язык. Отмечается, что в условиях взаимосвязанного обучения чтению и аудированию учащиеся приобретают такие способности и умения, которые способствуют раскрытию и пониманию содержания текста, угадыванию значений отдельных языковых единиц, пониманию общего содержания, выделению конкретных информаций, понимание подробной информации, интерпретация и т.д.

Ключевые слова: рецептивная деятельность, чтение, аудирование, определение содержания текста, прогнозирование и догадка, чтение и аудирование для общего понимания, чтение и аудирование для получения подробной информации, интерпретация.

Ներածություն

Ժամանակակից աշխարհում գլոբալացման շարունակական միտումները և կապի ու հաղորդակցության միջոցների սրընթաց զարգացումն ավելի ու ավելի են մեծացնում անգլերենի պահանջարկը՝ որպես միջազգային լեզվի: Ներքին և արտաքին քաղաքական գործունեություն ծավալելու, բանակցություններն արդյունավետ կերպով իրականացնելու, քաղաքական երկխոսություններ վարելու նպատակով կիրառվող հիմնական լեզուն անգլերենն է: Լեզվամշակութային քաղաքական ոլորտում այն գերիշխող դիրք է զբաղեցնում և շարունակում է լայնորեն կիրառվել որպես միջազգային հաղորդակցության լեզու:

Հարափոփոխ աշխարհում յուրաքանչյուրս էլ առնչվում ենք քաղաքական անցուդարձին: Մասնագիտական լեզվի տիրապետումն օգնում է ազգային և միջազգային մակարդակով տեղեկություններ ստանալ և փոխանակել, մասնակից լինել տեղի ունեցող իրադարձություններին, ծառացած խնդիրների լուծման համար ուղիներ առաջարկել:

Հետազոտության **նպատակն** է ուսումնասիրել և ներկայացնել ընկալողական խոսքային գործունեության տեսակների կիրառումը քաղաքագիտական անգլերենի դասավանդման գործընթացում: **Խնդիր** է դրվում ուսումնասիրել և վեր հանել սովորողների պահանջմունքները մասնագիտական ոլորտում առավել կատարելագործվելու և արդյունավետ գործունեություն ծավալելու համար:

Մասնագիտական (քաղաքագիտական) անգլերենի դասավանդման արդիականությունը

Քաղաքականությունը մեր կյանքի անբաժան մասն է: Քաղաքականությունը ենթադրում է գաղափարախոսություն, ինչը մարդու մտածողությանն է առնչվում, և գործողություն, որը ներկայացնում է մարդու վարքային ոլորտը: Քաղաքականությունը թափանցել է մարդկային

փոխազդեցության ավելի ու ավելի շատ ոլորտներ, իսկ քաղաքական հաղորդակցումը՝ դարձել մարդկային համայնքում ընթացող զարգացումների արտացոլման ու դրանց արձագանքման առավել արագ միջոց: Քաղաքական անցուդարձը, որը հասարակական կյանքի թերևս բոլոր ոլորտների տարբեր զարգացումների շարժիչ ուժն է, իր բազմաձև դրսևորումներով կարիք ունի համապատասխան լեզվական և հաղորդակցական արտահայտության: Վերջինս հնարավոր է դառնում մշակված խոսքային գործունեության՝ մասնավորապես քաղաքական խոսքի միջոցով:

Լեզվակրթության զարգացման արդի հիմնախնդիրներից ելնելով՝ ՀՀ բուհական ոլորտում բարեփոխումների իրականացման կարևոր պայման է օտար լեզուների ուսուցման գործընթացում նոր ռազմավարությունների, տեխնոլոգիաների, մեթոդների մշակումը և կիրառումը: Արդի փուլում նոր կարևորություն և բովանդակություն է ձեռք բերում մասնագիտական անգլերենի կամ հատուկ նպատակների համար անգլերենի դասավանդումը (ESP – English for Specific Purposes), որն անչափ անհրաժեշտ է ինչպես տարբեր ոլորտների մասնագետներին մասնագիտական և լեզվական հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման, այնպես էլ հասարակական և առհասարակ մասնագիտական գործունեություն ծավալելու համար: Մասնագիտական անգլերենի՝ այդ թվում քաղաքագիտական անգլերենի դասավանդման հիմքում պետք է կիրառել անձնակենտրոն մոտեցումը, որտեղ լեզվանյութի ընտրությունը, դասակարգումը, մշակումն ու ներմուծումը բխում են սովորողների՝ մասնագիտական անգլերենի յուրացման/տիրապետման պահանջմունքից: Այստեղ մեծ կարևորություն է տրվում նրանց կարիքների, հետաքրքրությունների և պահանջմունքների ուսումնասիրությանը և հաշվառմանը:

Արդյունքում սովորողները հստակ կողմնորոշում կունենան հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչպե՞ս պետք է հետագայում լեզուն կիրառեն։
- Ինչպիսի՞ հմտությունների և կարողությունների պետք է տիրապետեն և ի՞նչ մակարդակով։
- Ինչպիսի՞ լեզվառճերի պետք է տիրապետեն՝ ընկալողական կամ վերարտադրողական խոսքային գործունեություն ծավալելու նպատակով։

Դ. Նունանը նշում է, որ դասավանդողը պետք է խրախուսի սովորողներին մասնագիտական լեզուն ուսումնասիրել և սովորել հետևյալ սկզբունքները հաշվի առնելով.

- Լեզվանյութը պետք է լինի բնագիր՝ ներառելով համապատասխան առաջադրանքներ։
- Ուսուցողական միջավայրը պետք է լինի փոխներգործուն։
- Լեզվանյութի ընտրությունը կատարելիս հաշվի առնել սովորողների կարիքները և հետաքրքրությունները։
- Յուրացրած լեզվանյութը կարելի է կիրառել նաև ոչ լսարանային պայմաններում [4: 98–105]։

Ընկալողական խոսքային գործունեության կիրառումը քաղաքագիտական անգլերենի ուսուցման ընթացքում

Քաղաքագիտական անգլերենի ուսուցումն ու սովորողների կարողությունների հետագա կատարելագործումն արդյունավետ կարելի է իրականացնել՝ կիրառելով խոսքային գործունեության ձևերը՝ ընկալումը և վերարտադրումը։ Խոսքային գործունեության երկու ձևերն էլ կարող են հանդիպել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր տեքստերում։ Սույն աշխատանքի շրջանակներում ներկայացնում ենք քաղաքագիտական լեզվանյութի ուսուցումն ընկալողական գործունեության

(ընթերցել և ունկնդրել) տեսակների կիրառմամբ։ Լեզվանյութի ուսուցման գործընթացում ընկալողական կարողությունները ձևավորող և զարգացնող վարժություններով սովորողները ճանաչում և ընկալում են լեզվական միավորը՝ լինի դա բառ, բառակապակցություն, կայուն կապակցություն կամ դարձվածք [4]։ Ջ. Հարմերը նշում է, որ բառապաշարի ընկալողական շերտերի յուրացումը ենթադրում է սովորողների համապատասխան հմտությունների տարբերակում, իսկ յուրաքանչյուր բառապաշարային միավոր ենթակա է մշակման այն մեթոդական հնարներին ու ռազմավարություններին համապատասխան, որոնք վերաբերում են նյութի արդյունավետ յուրացմանը և լայն կիրառմանը հաղորդակցվելիս [3: 68–70, 97–98]։

Քաղաքագիտական լեզվանյութի դասավանդման գործընթացում ընթերցելու և ունկնդրելու կարողությունների փոխկապակցված ուսուցումը հնարավորություն է տալիս սովորողներին ձեռք բերել հմտություններ.

- ✓ **Տեքստի բովանդակության բացահայտում, ընկալում։** Սովորողները ըմբռնում են տեքստի բովանդակությունը և կարողանում են համապատասխան վերլուծություններ կատարել, կարծիքներ և մտքեր փոխանակել առաջադրված թեմայի շուրջ, լուծումներ առաջարկել տեքստում առկա այս կամ այն հարցի վերաբերյալ։
- ✓ **Տեքստի հեղինակի մտքի կռահում, կանխատեսում։** Ե՛վ ընթերցողները, և՛ ունկնդրողները երբեմն կռահում են հեղինակի միտքը՝ փորձելով ընկալել այն գաղափարը, որի մասին բացահայտ չի խոսվում առաջարկված տեքստում։ Հաճախ նրանք կանխատեսումներ են անում կարդացած կամ լսած որևէ հատվածի ընկալման համար՝ հասնելով հիմնական գաղափարի ըմբռնմանը։

- ✓ **Տեքստի ընդհանուր բովանդակության ընկալում:** Ընթերցողները և ունկնդիրները կարողանում են ընկալել տեքստը և հասկանալ դրա էությունը՝ չանդրադառնալով շատ մանրամասների: Նման «ընդհանուր» ըմբռնման համար կարդալ և լսել նշանակում է կանգ չառնել յուրաքանչյուր բառի համար, չվերլուծել այն ամենը, ինչ գրողը կամ խոսողը ներառում է տեքստում: Խրախուսվում է սովորողներին արագ աչքի անցկացնել տեքստը և ընդհանուր պատկերացում կազմել, թե ինչի մասին է այն:
- ✓ **Կոնկրետ տեղեկատվության դուրսբերում:** Սովորողները կենտրոնանում են անհրաժեշտ տեղեկատվությունը փնտրելու, գտնելու վրա: Կարող են լսել նորություններ՝ կենտրոնանալով միայն այն ժամանակ, երբ հայտնվում է իրենց հետաքրքրող նյութը կամ նայել ֆիլմի ակնարկ՝ գտնելու գլխավոր հերոսի կամ դերակատարի անունը: Երկու դեպքում էլ կարևորվում է այն տեղեկությունը, որը փնտրվում է:
- ✓ **Մանրամասն տեղեկությունների ընկալում:** Սովորողներին տրվում է հատուկ առաջադրանք, որը նրանք պետք է կատարեն ընթերցելիս կամ ունկնդրելիս՝ սևեռելով իրենց ուշադրությունը մանրամասներին:
- ✓ **Տեքստի մեկնաբանում:** Սովորողներն ընթերցում կամ լսում են՝ փորձելով հասկանալ տողատակերը, որոնք արտահայտված չեն տեքստում: Նրանք մեկնաբանում են հեղինակի, գլխավոր հերոսների մտադրությունները, մտքերը, արտահայտում են սեփական կարծիքը, համադրումներ և հակադրումներ իրականացնում:

Տվյալ համատեքստում դասավանդողը կատարում է հետևյալ գործառույթները.

- կազմակերպող,
- հետադարձ կապ ապահովող,
- քաջալերող, խթանող,
- դիտող, դիտարկող:

Ստորև ներկայացված առաջադրանքները նպատակաուղղված են զարգացնելու սովորողների քաղաքագիտական ընկալողական խոսքային կարողությունները:

➢ ***Բացահայտել տրված եզրույթների իմաստը բառակազմական վերլուծության միջոցով (identify the meaning of the given terms through lexical analysis).***

1. authoritarian
2. autonomous
3. capitalism
4. collaboration
5. colonization
6. consumerism
7. corporation
8. corruption
9. dictatorship
10. disinformation
11. engagement
12. (the) establishment
13. federation
14. illegal
15. libertarian
16. neoconservative
17. opportunist
18. Patriotism
19. recrimination
20. unethical

➢ ***Կռահել եզրաբառերի իմաստը՝ ելնելով բաղադրիչների իմաստից (guess the meaning of the terms based on the meaning of the components).***

Civil rights, (the) civil service, civil war, democratic socialism, domestic terrorist, election campaign, electoral college, equal rights, foreign relations, foreign aid, foreign policy, head of state, human rights, law and order, left-wing, lower class, market economy, middle class, national security, public opinion, right-wing.

➢ ***Հետևյալ վերջածանցները կապակցել եզրաբառերին՝ ստեղծելով նոր միավորներ (connect the following suffixes to the terms to create new words).***

-ism, -ous, -ion, -ive, ment, -ic, -or, -ance, -ant. -arian, -al

Active…, anarchy…, autonomy…, city…, elect…, femine…, govern…, legislate…, progress…, liberty…, reconstruct…, manage…, xenophobia…, senate…, resist…, participate…, humanity…, corporate…, relate…, integrate…, politics…, ideal…, liberal… .

➢ ***Առաջադրված աղյուսակներում զուգահեռ լրացնել համապատասխան եզրաբառը (complete the charts).***

General noun	Person
center	centrist
city	
communism	
liberalism	

Noun/person	Verb
election	elect
nationalism	
politics	
private enterprise	

Բառակազմական վարժությունները նպաստում են մասնագիտական բառապաշարի արդյունավետ յուրացմանը: Բառակազմական վերլուծություն իրականացնելն անհրաժեշտ է տեքստերում ածանցավոր, ինչպես նաև բարդ բառերը հասկանալու և մասնագիտական բառապաշարը յուրացնելու համար:

Եզրակացություն

Այսպիսով, սովորողների՝ քաղաքագիտական մասնագիտական լեզվանյութի ուսուցումն ու ամրապնդումը կարելի է իրականացնել նաև ընկալողական խոսքային գործունեության տեսակների և համապատասխան առաջադրանքների կիրառմամբ: Քաղաքագիտական անգլերենի դասավանդման գործընթացում ընկալողական խոսքային գործունեության տեսակները կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններն ու հետաքրքրությունները, ընկալման պայմանները (տեղեկատվության տևողությունը, հաղորդման ծավալն ու բնույթը), ներմուծվող տեքստի լեզվաբանական և ոճային առանձնահատկությունները, սովորողների լեզվական փորձն ու գիտելիքները: Մեծ նշանակություն ունեն նաև սովորողների լսելու և ընթերցելու հաղորդակցման տարբեր ազդանշանները (դադարներ, տրամաբանական շեշտ, հոետորական հարցեր) ա-

բագ իմաստավորելու, մտածական գործողության մի ձևից մյուսին անցնելու, ինչպես նաև հաղորդման թեմայի և էության մեջ ներթափանցելու կարողությունները:

ЛИТЕРАТУРА

1. *Ասատրյան Ս.* Անգլերենը լեզվահաղորդակցական ուսուցման համատեքստում = English In The Communicative Language Teaching Context / Ս. Ասատրյան, խմբ.՝ Ն. Պողոսյան, գրախ.՝ Ա. Թոփուզյան, Ի. Կարապետյան: – Երևան՝ Անտարես, 2019: – 384 էջ:
2. Լեզուների իմացության / իրազեկության համաեվրոպական համակարգ, ուսումնառություն, դասավանդում, գնահատում: Ծրագրի ղեկավար՝ Ս. Զոլյան, թարգմ.՝ Ս. Կարախանյան և ուրիշ., խմբ.՝ Ս. Զոլյան, Մ. Աստվածատրյան և ուրիշ.: – Երևան՝ Նորք գրատուն, 2005: – 308 էջ:
3. *Harmer J.* How to Teach English. Pearson Education Limited, 2010. – 289 p.
4. *Nunan D.* Language Teaching Methodology: A Textbook for Teacher (Upper Saddle River). – New York: Prentice Hall, 1991. – 264 p.
5. *Nuttall C.* Teaching Reading Skills in a Foreign Language, Macmillan Education, 2005. – 288 p.
6. ESL Politics Spoken Vocabulary [Electronic resource]. – Mode of access: https://youtu.be/9rZ6pHsveWg (Date of access: Nov 15, 2023).
7. Excellent ESL 4U / By Jolyon Dodgson, copyright © 2014–2020 [Electronic resource]. – Mode of access: https://www.excellentesl4u.com/esl-reading-worksheets.html (Date of access: Jan 17, 2024).

ԸՆԿԱԼՈՂԱԿԱՆ ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մ.Ա. Փիլիպոսյան

marinepiliposyan@gmail.com

Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի լաբորանտ, ասպիրանտ,

Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության է առնվում քաղաքագիտական անգլերենի ուսուցման գործընթացում ընկալողական խոսքային գործունեության տեսակների՝ ընթերցանության և ունկնդրման կիրառման հիմնախնդիրը: Ներկայացվում են համապատասխան առաջադրանքներ, որոնք առավելագույնս օգնում են սովորողներին յուրացնել մասնագիտական լեզուն՝ տվյալ պարագայում քաղաքագիտական անգլերենը: Նշվում է, որ ընթերցանական և ունկնդրական գործունեության փոխկապակցված ուսուցման պայմաններում սովորողները ձեռք են բերում այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք նպաստում են տեքստի բովանդակության բացահայտմանը, ընկալմանը, առանձին լեզվական միավորների իմաստների կռահմանը, ընդհանուր բովանդակության ընկալմանը, կոնկրետ տեղեկատվության դուրսբերմանը, մանրամասն տեղեկությունների ընկալմանը, մեկնաբանմանը և այլն:

Բանալի բառեր՝ ընկալողական գործունեություն, ընթերցել, ունկնդրել, տեքստի բովանդակության բացահայտում, կանխատեսում և կռահում, ընդհանուր բովանդակության ընկալում, մանրամասն տեղեկությունների ընկալում, մեկնաբանում:

APPLICATION OF THE TYPES OF RECEPTIVE SPEECH ACTIVITIES IN THE PROCESS OF TEACHING POLITICAL ENGLISH

M. Piliposyan
marinepiliposyan@gmail.com

Assistant, Postgraduate student of the Department of Pedagogy and Methods of Teaching Languages,
Brusov State University,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article touches upon the problem of using receptive speech activities (reading and listening) in the process of teaching political English. Relevant tasks are presented, which maximally help learners to master the professional language, in this case political English. It is noted that under conditions of interrelated use of reading and listening activities, learners acquire such abilities and skills that contribute to identifying the content, guessing the meaning of individual language units, understanding the general content, extracting specific information, understanding detailed information, interpretation and others.
Keywords: receptive activity, reading, listening, identifying the content, predicting and guessing, reading and listening for general understanding, reading and listening for detailed information, interpreting.

Информация о статье:
статья поступила в редакцию 12 января 2025 г.,
подписана к печати в номер 15 (19) / 2025 – 25.05.2025 г.